կապէս։ Մուսլիմներից ապանեցաւ մեծ բազմութիւն, իսկ խազարը տիրեցին նոցա բանակին եւ աւարի առան ինչ որ այնտեղ կար։ Զուբայրի հետ հանդերձ մուսլիմները փախստեամբ եկան Ասորիք Եղեդ ի. Աբդուլմալիքի մօտ։

Խազարը՝ վառուելով (մուսլիմների) երկրներին տիրելու ցանկութեամբ՝ միասին գումարուեցան։ Այն ժամանակ Եղեդ ի. Աբդուլմալիքը նշանակեց Ջառռահ ի. Աբդուլլահ Հակամիին կառավարիչ Հայաստանի վերայ, տուեց նորան բազմաթիւ զօրք եւ հրամայեց նորան յարձակիլ եւ ասպատակել խազարաց եւ այլ թշնամի երկրները։ Ջառռահ մեկնեցաւ։ Առնելով այս լուրը խազարը հեռացան եւ բանակեցան Բաբ-էլ-աբուաբում. իսկ Ջառռահ եկաւ Պարտաւ եւ մնաց այստեղ հանգիստ առնելու իւր զօրքի հետ, ապա՝ անցնելով Կուր գետը, արշաւեց խազարների վերայ։ Գիշերը նա հրամայեց բանակը վերցնել, արագ ճանապարհ դնաց եւ հասաւ Բաբ-էլ-աբուաբ քաղաքը, այնպէս որ խազարը նորան չը տեսան։ Մտնելով թշնամու երկիրը նա ցիրցան ուղարկեց հեծելադնդեր աւարի առնելու բոլոր շրջակայքը. նոքա հետեւեալ օրը վերադարձան աւարով։

Խազարը իրենց իշխանի որդու հետ դուրս ելան Ջառռահի դէմ. երկու գնդերը՝ պատահելով Ռան[1] գետի մօտ՝ սաստիկ պատերազմ դրին միմեանց հետ. Ջառռահ ոգեւորում էր իւր մարդիկը, եւ կռիւը վառեցաւ։ Խազարը ի փախուստ դարձան, եւ մուսլիմները հալածեցին նոցա, ապանելով եւ դերելով նոցանից մեծ բազմութիւն։ Ջառռահ դիմեց ապա Բալանջար, խազարների

---

[1] Ռնագրի ալ-Ռան الران ու գրելու է ալ-Ռաս (=Ա-բաբս) الراس. Նոյնն է Եաքուբիի (վերեւ 106) յիշած ալ-Ռուբաս գետը։